# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ա-30 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 10 | ARLIVACH | հանդերձանք | հանդերձանք | ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ | Գործվածքի մակերեսային խտությունը առնվազն 210□3 գրամ/մ2, բաղադրությունը՝ 50□2% պոլիէսթեր, 50□2% բամբակ, մշակված անջրաթափանց ծածկույթով,, գույնը՝ կանաչ (խակի): Բաճկոնի առաջամասի և թիկունքի ներդիրները մշակվում են երկկողմանի առնավզն 250 գրամ/մ2 խտությամբ սինտեպոնով, իսկ թևքերը և գլխանոցը՝ առնվազն 200 գրամ/մ2 խտությամբ սինտեպոնով: Աստառը՝ 70□2% գրամ/մ2 մակերեսային խտությամբ սև գործվածքից: Բաճկոնի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | թիկունքամասը մշակված է վրակարված կոկետկայով: Օձիքը կտրված կանգունակով, որի միացման կարում մշակված է կախիչ: Բաճկոնին 5 հատ 15մմ տրամագծով կոճգամներով ամրանում է գլխանոցը: Գլխանոցի ստորին հատվածում՝ լայնացող վերջավորություններին, մշակված են սև կպչուն ժապավեններ, որոնք միանում են իրար կենտրոնական կոճկվածքի ուղղությամբ: Բաճկոնը կոճկվում է կենտրոնական կոճկվածքով՝ երկկողմանի սև տրակտոր տիպի երիզաշղթայով և երեքական կպչուն ժապավեններով: Կպչուն ժապավենները ձախ լանջափեշին մշակվում են ներսի կողմից, իսկ աջ լանջափեշին արտաքին կողմից՝ եզրակարից 1սմ հեռավորությամբ: Բաճկոնի ստորին եզրաշերտով անցնում է քուղ՝ ելքային մասերում 7+/-1սմ կախված վիճակում, ծայրերը պլաստիկ բռնակներով: Ուսերին մշակված են 4,5սմ լայնքով և 13սմ երկարությամբ ուսադիրների կամրջակներ, որոնք ուսամասերի հետ կոճկվում են օղակ-կոճակով: Բաճկոնի առաջնամասում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մշակված են 4 վրադիր ծավալուն գրպաններ: Կրծքամասում՝ 14+/-1սմ լայնությամբ և 16+/-1սմ երկարությամբ, առաջնամասի կողային հատվածներում՝ 17+/-0.5սմ լայնությամբ և 20+/-սմ երկարությամբ, 6+/-0,2սմ լայնության կափույրներով: Կրծքամասի ձախ գրպանի կափույրների վրա՝ ստորին եզրից 1սմ հեռավորությամբ, կարվում են 13X2.5 սմ չափսով սև գույնի կպչուն ժապավեններ: Ձախ գրպանի կափույրի վրա՝ ստորին եզրից 1սմ հեռավորությամբ, տեղադրվում է 13X2.5սմ չափով սև գույնի՝ վրան ասեղնագործված բեժ գույնի «արյան կարգ»-ը տարբերանշանը: Առաջնամասի կողային գրպանները տեղադրված են բաճկոնի ներքին եզրից 3սմ բարձրության վրա: Կափույրները գրպաններին ամրանում են 3X2.5 սմ չափի, սև գույնի երկուական կպչուն ժապավեններով: Բաճկոնի աջ և ձախ կրծքամասերում մշակված են 14սմ լայնությամբ և 16սմ երկարությամբ ծոցագրպաններ՝ կպչուն ժապավենով ամրացող: Աջ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | թևքին՝ ուսագլխից 8սմ ներքև՝ ՓԾ թևքի տարբերանշանը, որն ամրացվում է կպչուն ժապավենով: Թևքերի արմնկամասում մշակվում են լրացուցիչ կրկնակի զարդակարերով վրադիր արմնկակալներ: Թևքի վերջավորությունը ներսի կողմից մշակված է 10սմ երկարությամբ էլաստիկ տրիկոտաժե մանժետով (բազկակալով)՝ կողից բթամատի բացվածքով: Բաճկոնի թևատակերում իրարից 2սմ հեռավորությամբ, մշակված են երեքական անցքեր մետաղական կլոր օղակներով՝ օդափոխության համար: Բաճկոնի և թևքերի ներքևի եզրերը ծալված են և վրակարված: Ծալման լայնությունը պատրաստի վիճակում 2սմ: Կենտրոնական եզրաշերտի վրա՝ վերևից 15սմ ներքև, ամրացվում է կամրջակի միջով անցնող 4,5սմ լայնությամբ պատա՝ 10սմX5սմ կոչման տարբերանշանի համար, ներքևի ծայրը եզրաշերտին ամրացվում է սև գույնի կպչուն ժապավենով: Բաճկոնի աստառի աջ և ձախ կրծքամասերում մշակված են |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АРЛИВАЧ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом << ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ա-30 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 10 | | | | | ծոցագրպաններ՝ շերտիկով, որը կոճկվում է 1 օղակով և կոճակով: Օծիքը կոճկվում է բաճկոնին լրացուցիչ շերտին մշակված 5 օղակներով և բաճկոնին կարված 5 հատ 15մմ տրամագծով կոճակներով: Օծիքի արհեստական մորթու 1մ2 մակերեսային խտությունը՝ առնվազն 750 գրամ/մ2, խավի բարձրությունը՝ ոչ պակաս 12մմ, գույնը սև: Մորթե օծիքի վզատեղի եզրը եզրակարված է երեսացուի կտորի եզրաշերտով: Բաճկոնի չափսերը կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Գլխարկը՝ կեպիի տեսքով բաղկացած է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից, հատակից և ականջակալ-ծոծրակամասից, որը մշակված է առնվազն 750 գրամ/մ2 մակերեսային խտությամբ, սև գույնի գործվածքային մորթաթաղանթով: Հովհարին միջադրված է առնվազն 3մմ հաստության պլաստիկ ճկվող |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | միջադիր, իսկ եզրից 1սմ խորությամբ մշակվում է զարդակար: Կողամասերը մշակվում են առնվազն 3մմ հաստության սոսնձային կտորից միջադրով: Աջականջակալի կարվում է 6-7 սմ երկարությամբ տիսմայից ժապավեն, որի վրա ամրացված են 2 հատ մետաղյա կոճգամի մտնող մասերը ականջակալի եզրակարից դեպի ներս` 1ինը 3սմ, 2-րդը 3-4սմ հեռավորության վրա, իսկ ձախ ականջակալի վրա եզրից դեպի ներս 2սմ հեռավորության վրա ամրացվում է 1 հատ կոչգամի ամրացող մասը: Ականջակալ-ծոծրակամասի ներսամասը 5-6 սմ կողմերով ուղղանկյունաձև, մգդակարված բիազով, ներսից մշակված առնվազը 100գրամանոց սինտեպոնով: Ականջակալի երկարությունը միացման կարից սկսած 54 չափսից 18սմ, հաջորդաբար յութաքանչյուր չափսին ավելանում է 2մմ: Գլխարկաբոլորքի բարձրությունը ճակատային մասում սկսած 54 չափսից 7,6սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 2մմ: Ծոծրակամասի բարձրությունը սկսած 54 չափսից 8,2սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ (թույլատրելի շեղում +/-1մմ): Գլխարկաբոլորքի կենտրոնում ասեղնագործված է խորհրդանշան՝ շրջանաձև, 56+/-1մմ տրամագծով, սև կտորի վրա գունավոր ասեղնագործված: Հովհարի լայնությունը կենտրոնական մասում 7+/-0.3սմ: Գլխարկահատակի կենտրոնում՝ ներսի կողմից, կարվում է չափսը և արտադրողի անվանումը: Հովհարի եզրից 1սմ խորությամբ մշակվում է զարդակար: Չափսերը կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային պարկերով: Գլխարկները՝ արկղերով, որոնք պետք է լինեն չդեֆորմացված՝ առանձին շարվածքով: Պիտակի վրա նշվում է տեսականու անվանումը, քանակը, չափսը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տարեթիվը: Պատվիրատուի պահանջով Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ` գործվածքի և մորթաթաղանթի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից: Պատվիրատուի պահանջով մատակարարից կարող է պահանջվել մատակարարված ապրանքատեսակի լաբորատոր փորձարկման եզրակացություն: |